ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «27» 12 2025 թ. № 4018Լ

ՎՏԱՆԳԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅԱՆ ԵՎ ՀՍԿՄԱՆ ԿՐԻՏԻԿԱԿԱՆ ԿԵՏԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԻ ՎՐԱ ՀԻՄՆՎԱԾ ԸՆԹԱՑԱԿԱՐԳԵՐԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՈՒՂԵՑՈՒՅՑՆԵՐԻ ՀԱՍՏԱՏՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Սննդամթերքի անվտանգության մասին» օրենքի 8-րդ հոդվածի 8.1-ին մասով, Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1–ի N 658–Լ որոշման հավելվածի 18–րդ կետի 21–րդ ենթակետով և հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի մարտի 23-ի N 356-Լ որոշման N 2 հավելվածի 5.2-րդ կետը՝

հրամայում եմ.

1. Հաստատել՝

1) միս-մսամթերքի և թռչնի մսի արտադրություններում վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի սկզբունքների վրա հիմնված ընթացակարգերի ներդրման ուղեցույցը՝ համաձայն N 1 հավելվածի.

2) կաթի և կաթնամթերքի արտադրությունում վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի սկզբունքների վրա հիմնված ընթացակարգերի ներդրման ուղեցույցը՝ համաձայն N 2 հավելվածի.

3) ձուկ-ձկնամթերքի արտադրությունում վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի սկզբունքների վրա հիմնված ընթացակարգերի ներդրման ուղեցույցը՝ համաձայն N 3 հավելվածի.

4) մրգերից և բանջարեղենից ստացված հյութամթերքի, փաթեթավորված խմելու ջրի, այդ թվում՝ հանքային ջրերի արտադրություններում վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի սկզբունքների վրա հիմնված ընթացակարգերի ներդրման ուղեցույցը՝ համաձայն N 4 հավելվածի.

5) ալկոհոլային խմիչքների արտադրություններում վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի սկզբունքների վրա հիմնված ընթացակարգերի ներդրման ուղեցույցը՝ համաձայն N 5 հավելվածի.

6) հանրային սննդի կազմակերպություններում վտանգի վերլուծության և հսկման կրիտիկական կետերի համակարգի սկզբունքների վրա հիմնված ընթացակարգերի ներդրման ուղեցույցը՝ համաձայն N 6 հավելվածի:

2. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Recoverable Signature

X

Signed by: GEVORG PAPOYAN 2102870448

ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ